



Հ. Մ. ԱՆԱՍՅԱՆ

(ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Պատմության ինստիտուտի գիտաշխատող)

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՓԵՆՈՍ ՍԵԼՄԵՍԵՑՈՒ ԿԵՆՍԱԿԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Ստեփանոս կաթողիկոս Սալմաստեցիին առաջին զործույնյա գեմքն է հանդիսանում մեր ազատագրական շարժումների պատմության մեջ: Նրա զործունեության վերաբերող սկզբնաղբյուրներն ընդհանրապես շատ քիչ են, իսկ նրա մասին կենսագրական տեղեկություններ, կարելի է ասել, բոլորովին բացակայում են: Հ. Միրայել Չամչյանի ունեցած տեղեկությունների համաձայն, Ստեփանոսն «էր ծննդեամբ ի Սալմաստ կամ ի Սաղամաստ քաղաք, աշխարհին Կորճէից, և սննդեամբ ի Կոստանդնուպոլսոյ», որով կոչվում էր թե՛ Սալմաստեցի, թե՛ Կոստանդնուպոլսեցի, և իր ժամանակի կրթված և դարգացած անձնավորություններից մեկն էր¹: Նա 1541 թվականին հիշատակվում է որպես ամուսնուկից էջմիածնի Գրիգոր ԺԱ կաթողիկոսին, իսկ 1545 թվականին հիշատակվում է առանց Գրիգորի, և այս թվականն էլ համարվում է նրա առանձին կաթողիկոսության տարին, ունենալով մի նոր ամուսնուկից, որ էր Միրայել Սերաստացին: Բայց այս շուրջ

թվականները, որոնք Առաքել Դավրիժեցուց են առնված² և ընդունված են մեր պատմագիտության մեջ, հաստատ թվականներ չեն, այլ միայն մոտավոր, ինչպես կոեսներ քիչ հետո Դավրիժեցու մասին խոսելիս: Հաստատ և ստույգ է սակայն այն, որ Ստեփանոս Սալմաստեցին մի քանի տարի հետո Հայաստանի պարսկական տիրապետության տակ զոնվող մասի մեկիքների կողմից որպես ներկայացուցիչ ուղարկվել է Եվրոպա, Հայաստանի ազատագրության համար օգնություն խնդրելու նպատակով: Վենետիկի զինաներում պահված է 1547 թվականին հայ մեկիքների կողմից Վենետիկյան կառավարության ուղղված դիմումը, որով նրանք հայտնում են, թե Ստեփանոս կաթողիկոսը պաշտոնում իրենց անունից բանակցություն կատարելու³: Գուշտեր Արեւմտինոսից տեղեկանում ենք, որ Ստեփանոսը Հռոմ է հասել 1548 թվականին⁴: Իսկ Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագրերից մեկ հայտնի է մի վկայագիր, որ Ստեփանոս Սալմաստեցին 1549 թվականին Հռոմում տվել է եթովպացի Տեր Պետրոսին առ այն, որ ինքը նրան հայկական է ծննդադրել, նրա ազնիվ ժառանգությունների համար⁵: Հռոմից 1550 թվականին նա մեկնել է, ըստ վկայության Գուշտեր Արեւմտինոսի, որի հաշվարկով

1. Հ. Մ. Չամչյան, «Պատմություն Հայոց», հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 517:

2. Չամչյանի հիմնական աղբյուրն եղել է Steph. Evod. Assemanus, «Catalogus codicum mss. orientalium Bibliothecae Mediceae Laurentianae et Palatinae», Florentiae, 1742, p. 59—61. Այստեղ խոսվում է Ստեփանոս Սալմաստեցու զրահան աշխատությունների մասին, ինչպես և նրա Հռոմում գտնվելու մասին բերվում են տեղեկություններ Գուշտեր Արեւմտինոսից, որի հետ մտերմական հարաբերությունների մեջ էր եղել Սալմաստեցին այնտեղ:

3. Առաքել Դավրիժեցի, «Պատմություն», Վաղարշապատ, 1896, էջ 437:

4. Պահված է միայն դիմումի խաչերեն թարգմանությունը, որի հայերեն վերաթարգմանությունը տե՛ս Հ. Ղ. Ալիշան, «Հայ-Վենետ.», Վենետիկ, 1896, էջ 325—330:

5. S. — E. Assemanus, «Catalogus, etc.», P. 60.

6. Հ. Ղ. Ալիշան, «Հայաստան», Վենետիկ, 1901, մասն. Բ, էջ 592—593:

Տացել էր անյտեղ, զեպի Գերմանիա, այնտեղից Լեհաստանի և Ռուսաստանի վրայով Հայաստան վերադառնալու համար⁶։ Այս է ամբողջությունը պատմական այն տեղեկությունների, որոնք վերաբերում են Ստեփանոս Սարմաստեցու կյանքին ու գործունեությանը։ Հոռմից հետո մենք այլևս ոչ մի տեղեկություն չենք գտնում նրա մասին, դո՛ւնե մինչև այժմ ծանոթ եղած սկզբնաղբյուրներում։ Միայն կան մի քանի տվյալներ, որոնք խոսում են այն մասին, թե Ստեփանոս Սարմաստեցին 1551 կամ 1552 թվականին մահացած և թաղված լինի Լվովում, առանց կարողանալու վերադառնալ Հայաստան. սակայն այդ տվյալները, ինչպես մենք տեսնելու ենք, չափազանց կասկածելի են և զուրկ պատմական որևէ իրողություն հաստատելու հանգամանքները ներկայացնելուց։ Հիմնականում այս վերջին խնդրին է նվիրված սույն հոդվածը։

Կարծում ենք, որ այս խնդիրը շահեկանությունից զուրկ չէ մեր պատմագիտության համար ոչ միայն այն պատճառով, որ մենք սրանով կճշտենք Ստեփանոս Սարմաստեցու նման պատմական մի զեմքի կենսագրության մեջ մեկ կամ մի քանի կետեր, այլ մանավանդ այն պատճառով, որ մենք սրանով միավորվել որոշ դիժ գտած կլինենք հայ ազատագրական շարժման առաջին ձեռնարկումների միջև։

Ստեփանոս Սարմաստեցին կատարել է հայ ազատագրական շարժման առաջին ձեռնարկումը 1547 թվականից սկսած և դա տևել է մինչև 50-ական թվականների առաջին տարիները։ Նրկորոգ ձեռնարկումը կատարել է Սարմաստեցու հաջորդ Միքայել Սերաստացի կաթողիկոսը, մի տասնյակ տարի հետո, 1562 թվականին, Հոռմի պապի մոտ պատգամավոր ուղարկելով Արգար նվաճողություն։ Այս երկու սկզբնական ձեռնարկումները հայոց ազատագրական շարժման ծագման և ծավալման երկու ուրույն շրջաններն են կազմում այն իմաստով, որ մինչև առաջինը միայն Արևելյան կամ Պարսկական Հայաստանի ազատագրության նպատակով էր, երկրորդն արդեն Հայաստանի միաժամանակ արևելյան և արևմտյան մասերի ազատագրության համար էր, ուղղված թե՛ պարսկական և թե՛ թյուրքական տիրապետության դեմ։ Այս պատճառով իսկ հետաքրքիր է պարզել, թե արդյոք սերտ կապ գոյություն չունե՞ր այդ երկու ձեռ-

նարկումների միջև, ուրիշ խոսքով՝ երկրորդը առաջինի հետևողական շարունակությունն ու զարգացումը չէ՞ր արդյոք. մի խնդիր, որն ինքնարեքսպորտ առաջ է դալիս այս շրջանի պատմությանը զբաղվողի առաջ, որպես բնական հետևանք այն իրողության, որ ոչ միայն ժամանակի նկատելի անջրպես գոյություն չի ունեցել երկու ձեռնարկումների միջև, այլև հիշյալ կաթողիկոսները զեռ այդ ձեռնարկումներից էլ առաջ, զեռ առնվազն 1545 թվականից աթոռակիցներ են եղել միմյանց և հետևաբար նաև զապափարակիցներ, այնպես որ Ստեփանոս Սարմաստեցին նվազա մեկնելիս Աթոռն ամբողջովին Միքայել Սերաստացուն էր հանձնել։ Մեր ազատագրական շարժման սկզբնական շրջանին վերաբերող աղբյուրների աղբատությունն առհասարակ մեզ թույլ չի տալիս, ինչպես զեպքերն առանձին վերցրած լրիվ պատկերացնել, այնպես էլ ծանոթ զեպքերի առնչության մասին լրիվ զաղափար կազմել, այնպես որ այս տեսակետից իրոք նշանակություն ունի մեր առաջադրած խնդիրը, որովհետև եթե պարզվի, թե Ստեփանոս Սարմաստեցին 1551—1552 թվականներին Լվովում չի մահացել, այլ վերադարձել է Հայաստան և շարունակել է որոշ ժամանակ իր կաթողիկոսությունը, ինքնին արդեն պարզ կդառնա նաև, թե Սարմաստեցու և Սերաստացու օրով կատարված ձեռնարկումները չէին կապ ու կորված լինել միմյանցից։

Մեր հարցը, ուրեմն, Ստեփանոս Սարմաստեցու մահվան նշված թվականի ու վայրի մասին է, և մենք տալագրությունը հայտնի մի քանի սկզբնաղբյուրների մասին դիտողություններով և մի շարք անտիպ աղբյուրների օգտագործմամբ կարող ենք մոտենալ այս հարցին. իսկ այս կապակցությամբ արժարժված խնդիրների լուծումն ի հայտ է բերում որոշ նորություններ Ստեփանոս Սարմաստեցու կյանքի ու գործունեության վերաբերյալ։

Առհասարակ անժանոթ են Սարմաստեցու կյանքի պարագաները 1550 թվականից հետո, այսինքն՝ այն թվականից, երբ նա Հոռմից մեկնել է։ Սակայն լեհահայ հեղինակների շարքին պատկանող մի տապանաբար, որը տակավին պահվում է Լվով քաղաքի մայր եկեղեցում, ասում է, թե նա մահացել է նույն քաղաքում 1551 թվականին։ Տապանաբարը, որի գեղեցիկ քանդակված Ստեփանոս կաթողիկոսը ներկայացված է լատինական եկեղեցական տարազով, կրում է հետևյալ լատիներեն արձանագրությունը.

6. S.—E. Assemanus, «Catalogus» etc., P. 60 Հմտ. 2. Մ. Չամչյան, «Պատմություն Հայոց», հատ. 9, էջ 518։

HOC SEPVLCRM EST REVERENDIS-SIMI PATRIS STEPHANI PATRIAR-CHAE MAJORIS ARMENIAE QVI ROMAE FVIT ET LEOPOLI ADVENIENS ANIMAM SVAM DEO TRADIDIT A. D. 1551⁷.

Այսինքն՝ ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐՆ ՄԵ-ՐՈՅ ՍՏԵՓԱՆՈՍԻ, ՀԱՅՈՅ ՄԵԾԱՅ ՊԱՏ-ՐԻԱՐԲԻ, ՈՐ ԳՆԱՅ Ի ՀՌՈՎՄ ԵՒ ԵԿԵԱԼ Ի ԼԵՈՊՈԼԻՍ ՓՈԽԵՑԱԿԻ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1551:

Այս դեպքի մասին գրավոր հիշատակա-րաններ մեզ հայտնի են միայն երկու հատ: Կամենեցյան տարեգրության մեջ 1552 տա-րեթվի տակ կա հետևյալ հատվածը.

«Ի թվին Հայոց ՌԱ. Յունվարի 14. Տէր Ստեփանոս էջմիածնու կաթողիկոսն եկն ի Ֆրանգիստանու ի Լով քաղաքն, և անդ վաղճանեցաւ»⁸:

Իսկ Ստեփանոս Ռոշքան 1551 տարեթվի տակ գրում է իր ժամանակագրության մեջ.

«1551. Ռ. Ստեփանոս կաթողիկոսն էջ-միածնի, կամ ընկեցաւ յԱթոռոյն, կամ իւրովի թողեալ, երթալ ի Հոսմ, և կատարեալ զհնազանդութիւն և զուստն իւր զայ ի Լեօ-պոլիս, և մեռանի յայսմ ամի, որպէս ցու-ցանէ դերեզմանաբարին նորա գիրն»⁹:

Սրանք են միայն ծանոթ աղբյուրներն այս մասին:

Նրկու գրավոր հիշատակարանները, դի-տելի է, ժամանակակից չեն դեպքին, այլ շատ ուշ են կազմված, — Կամենեցյան տա-րեգրությունը կազմված է ժե դարի ա-ռաջին կեսին, իսկ Ռոշքայի ժամանակա-գրությունը ժԸ դարի առաջին կեսից է, — բայց դրա փոխարեն մենք պարտավոր էինք ամեն պարագայի հաշվի առնել Ստեփանոս Սալմաստեցու տապանաբարը, քանի որ վիճական արձանագրությունները, որպես ժամանակակից հիշատակարաններ, առհա-սարակ մեծարժեք աղբյուրներ են հանդի-սանում պատմական դեպքերի ճշման հա-մար, եթե սակայն ուրիշ ստույգ տվյալներ արդարացի կասկածանքներ չհարուցեն նրա դեմ:

7. «Կամենից. տարեգիրք. Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ», հրատ. Հ. Դ. Ալիշանի, Վենետիկ, 1806, էջ 135: Кs. Sadoc Paraez, „Ryz Dziejow crmian-skich», Tarnopol, 1869, էջ 113:

Տապանաբարի ներդիր նկարը տեսնել հետևյալ հրատարակության մեջ: Czesław Lechicki, „Kos'cio ormianski w Polsce (Zarys historyczny)», Lwow, 1928, 40 և 41-րդ էջերի միջև:

8. «Կամենից», էջ 191

9. Նույն տեղում, էջ 135:

Նախ տեսնք, թե անցյալում մեր հայտնի պատմաբաններից մի քանիսը Ստեփանոս Սալմաստեցու կաթողիկոսության տեղում-իցումը դրել են շատ ավելի ուշ, քան 1551—1552 թվականներին: Այսպես, օրինակ, ըստ Համլյանի՝ Ստեփանոս Սալմաստեցին էջ-միածին վերադառնալուց հետո 1553 թվա-կիր մի հիշատակարանում հիշվում է որ-պես հայոց կաթողիկոս. և նա ավելացնում է. «բայց զկնի այսորիկ իբրև անցին սա-կա ժամանակը, հասեալ նորա ի վախ-ճան կենաց իւրոց՝ մեռաւ», առանց նշելու մահվան տարեթիվը¹⁰, իսկ իր ժամանակա-գրական աղյուսակում նշում է, որ Ստե-փանոսը երկրորդ անգամին կաթողիկոսու-թյուն է արել 9 տարի¹¹: Հ. Դ. Ալիշանը Կաֆայում գրված մի հիշատակարանի հի-ման վրա Սալմաստեցու կաթողիկոսության սահմանը դնում է 1564 թվականին¹²: Մ. Օրմանյանը նույնպես ընդունում է այս 1564 թվականն իր «Հայոց Եկեղեցին» աշ-խատության մեջ¹³, իսկ «Ազգապատում»-ում միտում է թվականը տասնել մինչև 1566 կամ 1567¹⁴:

Բայց այս հարցում հարկ է հատկապես հաշվի առնել ժե դարի պատմագիր Առա-քել Դավրիժեցուն, որի Պատմության ԼԱ զուգար հայոց կաթողիկոսների ժամանա-կագրությունն է պարունակում, ներսես Շնորհալույց սկսած մինչև Հակոբ Զուղա-յեցին: Դավրիժեցու այս դավազանագրու-թյունը, պետք է նկատել, իրավամբ առաջ-նորդող սկզբնաղբյուր է եղել վերոհիշյալ և այլ պատմագետների համար և ղեռ շարու-նակում է լինել՝ Ստեփանոս Սալմաստեցու, նրա աթոռակիցների և հաջորդների կաթո-ղիկոսության հետ կապված թվականների վերաբերյալ: Գավազանագրի մեղ հետա-քրքրող հատվածը հետևյալն է.

«ՋԶԵ Թ. (1536) կաթողիկոս Տէր Գրիգոր: ՋՂ Թ. (=1541) նոյն Տէր Գրիգոր. այլ և եղև կաթողիկոս Տէր Ստեփանոս Սալմաս-տեցի:

ՋՂԴ Թ. (=1545) նոյն Տէր Ստեփանոս. այլ և եղև կաթողիկոս Տէր Միրայել:

10. Հ. Մ. Զամյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Դ, էջ 519:

11. Նույն տեղում, հավելվածում, էջ 96:

12. Հ. Դ. Ալիշան, «Այբարատ», Վենետիկ, 1890, էջ 230. Թեև հեղինակը հաջորդ 231 էջում էլ նշում է, Ռոշքայի հետեղությունը, թե Ստեփանոսը մա-հացել է 1551 թվականին:

13. Մ. արքեպիսկոպոս Օրմանյան, «Հայոց Եկեղե-ցին», Կոստանդնուպոլիս, 1911, էջ 257:

14. Մ. արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, Կոստանդնուպոլիս, 1914, §§ 1555 և 1566:

ՌԶ Բ. (=1557) նույն Տէր Սահփաննոս՝ և նույն Տէր Միքայէլ. այլ և եղևն կաթողիկոսը Տէր Բարսեղ և Տէր Գրիգոր:

ՌԺԶ Բ. (=1567) նույն Տէր Միքայէլ և նույն Տէր Բարսեղ և նույն Տէր Գրիգոր. այլ և եղև կաթողիկոս Տէր Սահփաննոս Առնշեցի¹⁵:

Դավրիժեցու գաղազանացանկը մեզ համար արժեք է ներկայացնում այն տեսակետից, որ նա հորինված է ժամանակակից հիշատակարանների հիման վրա, հաւանաբար Մայմատեցու շրջանին վերաբերող մասում, և այդ պատճառով նրա տված թվականներն անտարակույս ճշգրիտ են, բայց նա գահակալման թվականներ չէ որ տալիս է, այլ ցույց է տալիս միայն, թե այս կամ այն թվականին հիշատակված է եղել այս կամ այն կաթողիկոսը: Նուսելով իր ցանկի կազմության մասին, Դավրիժեցին գրում է.

«Եւ մեր ժողովեալ գամենայն կաթողիկոսաց անուանսն, սկսաք շարագրել զնոսա ըստ կարգի թվականին, զի որ ի նախնի թուոջն էր՝ նախագոս կարգեցար. և որ յերկրորդում թուոջն էր՝ երկրորդ գոս կարգեցար. և որ յերրորդում թուոջն էր՝ երրորդ գոս կարգեցար. և այսպէս առնելով հասուցար մինչև ի մեր ժամանակս... Իսկ այն թուականն՝ որ իրաբանելիւր կաթողիկոսացն սկիզբ զրեւելայ, ոչ թէ զնոցին կաթողիկոսացն նստելոյ զառաջին ամն նշանակէ, այլ միայն նշանի վասն կարգեցար, զի այն թուովն զիրեւա ճանաչեմք զայն կաթողիկոսն. այլ և թէ իցեն երկու Կարապետ կամ երկու Պօղոս՝ ժամանակաւ մերձակալ մեմնանց, այնու թուովն զիրեւա թամանեմք յիրեւաց, և ոչ ևս տարակուսիմք՝ արդեօք մի՞ են սորա թէ երկու: Իսկ այն թիւքն որ զկնի կաթողիկոսացն գրեալ կալ որ ցուցանէ թէ այս անուն կաթողիկոս, այսքան ամ յաջորդեաց. յայս թուոցս զբազումն ոչ գրեցար, միայն զոմանս, քանզի երկու և երեք օրինակ ի միասին բերեալ՝ տեսար՝ զի ոչ զոգարան ասէին, վասն որոյ և ոչ գրեցար... Իսկ ի վերայ էջմիածնի կաթողիկոսացն ոչ ի սկիզբն գտար գրեալ՝ ոչ ի վերջն. քանզի զէջմիածնի կաթողիկոսաց անուանսն գամենեցուն ի յիշատակարանաց գրոց հաւարեցար, որ զկաթողիկոսացն ոչ զսկիզբն և ոչ զվախճանն ցուցին»¹⁶:

Դավրիժեցու տված թվականներն, ուրեմն, չեն նշում այս կամ այն կաթողիկոսի իշխանության սկիզբը կամ վերջը, այլ այն միայն, թե ո՞ր կաթողիկոսները ո՞ր թվականներին են հիշատակվել¹⁷: Ուստի այս հաշվով Առաքել Դավրիժեցու մոտ մենք ունենք մի հավասար վկայություն այն մասին, թե Սահփաննոս Մայմատեցին որպես կաթողիկոս հիշատակված է եղել 1557 թվականի մի հիշատակարանում, առանց զեռ բացատկու, թե այդ թվականից հետո էլ նա կարող էր կենդանի եղած լինել. որով համենայն զեպս Չամչյանը, Ալեքանը և Օրմանյանը, որոնք հետեւ են Դավրիժեցու գաղազանացանկին, հիմնականում իրավացի են նրանում, թե Մայմատեցու կաթողիկոսությունը շարունակվել է եվրոպայից նրա վերադառնալուց հետո:

Դավրիժեցու այս վկայությանը, որ կարևոր է մեզ համար, ոմանք անուշադիր կամ արհամարհական վերաբերմունք են ցույց տալիս: Հ. Ն. Ակինյանը, առանց որեւէ տարակույսի կամ վարանման ընդունելով Լվովի տապանաբարը, պարզապես անտեսում է Դավրիժեցու վկայությունը¹⁸: Անկասկած՝ Հոսմին տուրք տալու կանխակալ մտահոգությունն է, որ Ակինյանին մղում է անտեսելու ինչպես Դավրիժեցու այս վկայությունը, այնպես էլ այս թեզին նպաստող ուրիշ ցուցմունքներ, ինչպես, օրինակ, Չամչյանի ավանդած այն տեղեկությունները, որոնք այլ աղբյուրներից են: Բայց ուրիշներ ևս, որոնք սկզբունքով հակառակ դիրքերի վրա են կանգնած, աղբյուրների ոչ-բնագրատական օգտագործման հետևանքով ընկել են նույն սխալ ուղու մեջ: Այսպես, օրինակ, Մայմատեցու մասին խոսելիս Լեոն, անուշադիր թողնելով Դավրիժեցուն, ինչպես և Չամչյանին, ասում է, թե «նա մեռավ Լեհաստանում, շտեմնելով իր

17. Այսպիսով, ի միջի այլոց, պիտի նկատի ունենալ նաև, որ Դավրիժեցու մոտ գտնվող 1541 թվականը, երբ Սահփաննոս Մայմատեցու անունն առաջին անգամն է հանդես գալիս ցանկում, նրա իշխանության առաջին տարին չէ անդալման, ինչպես և 1543 թվականը, երբ ցանկում Մայմատեցու անվան հետ երևան է գալիս Միքայել Սերաստացու անունը, վերջինիս անտակցության առաջին տարին չէ անդալման. այլ այս երկու թվականները կարող են ինչպես պատահաբար շատ հիշտ լինել, այնպես էլ կարող են մոտավոր միայն լինել. նույնը և մյուս կաթողիկոսների համար: Այս ճշտումը կարևոր ենք գտնում այն պատճառով, որ մեր բոլոր պատմաբանները, Չամչյանից մինչև այսօր, Դավրիժեցու տված թվականներն օգտագործում են որպես հաստատուն տարեթվեր:

18. Հ. Ն. Ակինյան, «Ազատության շարժումը Ժն-ժԶ դարում հայոց մեջ», «Հանդես Ամսօրեայ», 1917-1918, էջ 147:

15. Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 437-438:

16. Նույն տեղում, էջ 433-434:

գծբախտ երկիրը»¹⁹։ Արշակ Ալպոյաճյանը Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության կապակցությամբ Օրմանյանի քննադատության նվիրված մի հոդվածում, ամուր և անասան հենարան ընդունելով Սալմաստեցու մահվան մասին եղած տվյալները, քանդված է հայտարարում Դավրիժեցու ժամանակագրությունը, ինչպես ինքն է ասում, կաթողիկոսի «անհերքելի մահվան իրողությունը»²⁰։ Նույն հեղինակը Գ. Լեոնյանի «Վատիկանի դիվանագիտական խաղերը կամ Սուլթանշահ Ամիրբեգյանը հայոց թագավորության թեկնածու» հոդվածի առթիվ գրված մի լուսարանության մեջ, հիմնվելով դարձյալ իր սիրած «անսուտ վավերագրեր»-ի վրա, կրկնում է նույն միտքը²¹։

Սակայն մեր անձնական հետազոտությունները հաստատում են Դավրիժեցու վկայության ճշտությունը։ Մեզ ծանոթ են հիշատակարաններ, որոնք ցույց են տալիս, թե իրոք Սալմաստեցին 1551—1552 թվականներին չէր մահացել։

Երևանի Պետական մատեն.-ի № № 6273 և 6332 ձեռագրերում Ղ. վրդ. Փիրղալեմյանի կազմած անտիպ ժողովածուների մեջ գտնում ենք 1555 թվականին կվովում գրված մի ձեռագրից հանված երեք հիշատակարաններ, որոնք մեզ տեղեկություններ են տալիս այս մասին։ Այդ հիշատակարանները մենք կտանք ամբողջությամբ, որովհետև նրանք չափազանց կարևոր են մեզ համար։

Ահա՛ առաջին հիշատակարանը.

«Փառք համալոյ սուրբ և միաթագ աստուածութեան... աղաչեմ զամենեանեդ՝ որք հանդիպիր այսմ տառի՝ թէ՛ կարդալով և թէ՛ օրինակելով՝ մի՛ մեղադրէք զրոյս և սխալանաց բանին՝ զի անդիտակ էի այս արուեստիս. բայց երկու պատճառի համար գրեցի զայս գիրքս ըստ կարեաց իմոց. առաջին՝ զի հնացեալ էր օրինակ սորա և այլ չկայր. երկրորդ՝ վասն հաւատոյ խնդրողին. և զայն դատարկ միջոցներն աւերեալ էր՝ վասն այն ոչ գրեցի.

19. Լեո, «Հայոց պատմություն», հատ. Գ, Երևան, 1946, էջ 190։

20. Ա. Ալպոյաճյան, «Ստեփանոս Սալմաստեցի և Ստեփանոս Առնեցեցի կաթողիկոսներու ժամանակագրությունը», «Միտն», 1931, էջ 309։

21. Տե՛ս Ա. Ալպոյաճյանի նամակը «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը, «Էջմիածին», 1945 թ., «գրատու»-հոկտեմբեր, էջ 56։

Մենք հաշվի չենք առնում ուրիշ հեղինակների, որոնց կարծիքներն առհասարակ որևէ նշանակություն չունեն այս գիտական հարցում։ Օրինակ՝ Վ. Մ. Ասատուրյան, «Քն ուր և ուր թվականին վախճանած է Ստեփանոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսը», «Արևելք», Կոստանդնուպոլիս, 10 դեկտեմբերի 1932 թ.։

զի այլ վարդան գիրք՝ ոչ կայր յայս երկիրս. զի ենք ի Հայաստան երկրէն, ի մէջ երկու աղբաց՝ Ուռուղին և Նեմիշ Զոռան։ Գինս Դարձեալ աղաչեմ աղօթից մի՛ մոռանար զԳրիգոր Վարազեցի՝ նորաբողբոջ քաջ բարունապետն. և զպարոն Միրարն և զԱյգուռնիաշան. և զուսուցիշն զՍտեփաննոս կաթողիկոս Սալմաստեցին. որ ի Ռ. Թուրն Հայոց առ Քրիստոս փոխեցաւ յիւով քաղաքին [Եպիսկոպոսութեան Իւովայ զԳրիգոր վարդապետն՝ զարդար և զանարատն կուսակիւն զվաշեալն ի բաղմաց. վասն աղաչանաց այս ժողովրդեանս՝ զոր վայելէ երկար ժամանակաւ ամէն։ Կատարեցաւ գիրք Վարդան վարդապետին ՌԴ. Թուրն ձեռամբ մեղսակարթ տղէտ Մշեցի Օհանիսով անպէտ արեղին»²²։

Այս հիշատակարանը, իհարկե, իր այս ձևի մեջ պարզ չէ և կարող է սխալ մեկնաբանվել, հասկացվելով այնպես, թե «Ստեփանոս կաթողիկոս Սալմաստեցին, որ ի Ռ. Թուրն հայոց առ Քրիստոս փոխեցաւ յիւով քաղաքին, և եղ յաթոռ Եպիսկոպոսութեան Իւովայ զԳրիգոր վարդապետն», այսինքն՝ թե նա մահացել է 1551 թվականին կվովում, որտեղ և Գրիգոր Վարազեցուն Եպիսկոպոս է կարգել, անշուշտ իր մահից առաջ։ Հիշատակարանի հենց այսպիսի մեկնաբանումն էլ անբնական չէր լինի, եթե նույն ձեռագրի երկրորդ հիշատակարանը չպարտադրեր մեզ ուղղում մտցնել այստեղ։ Իր երկրորդ հիշատակարանում հեղինակն ասում է, թե Գրիգոր Վարազեցու կվովի Եպիսկոպոս լինելու թվականն է՝ 1555 թվականի ապրիլի 14-ը.

«Գրիգոր բարունապետն, որ Թուրն ՌԴ յապրիլ ԺԴ Եպիսկոպոս եղև Լով և Կամենից մայրաքաղաքացս. աղաչանօք և բազում խնդրածով՝ ժողովրդեանս հայկազեան ազգիս՝ որ աստ կան բնակեալ ի մէջ խառնայխառիճ աղբացս՝ Լեհ և Ուլուղ կոչեցեալ. ի թագաւորութեան Զիկմոնդ Ակոստոսի...»²³։

Այս հիշատակարանից հետևում է, որ 1551 թվականին մահացողը ո՛չ թե կաթողիկոսն էր, այլ կվովի նախկին Եպիսկոպոսը.

22. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 6273, էջ 454—455. № 6332, էջ 265—266։ Այս երկու ձեռագրերն էլ Ղ. վրդ. Փիրղալեմյանի կազմած հիշատակարանների ժողովածուներ են, որոնց մեջ երկու անգամ ընդօրինակված են Մշեցի Օհանիսովի հիշատակարանները։ Փիրղալեմյանը այդ հիշատակարաններն արտագրել է 1885 թվականին Լիմ անապատում, որտեղ գտնվում էր այդ ժամանակ Օհանիսովի ձեռագիրը։

23. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 6273 էջ 455, և № 6332, էջ 266։

որի տեղը 1555 թվականին անցնում էր Գրիգոր Վարազդեցին, Ուրեմն Ստեփանոս Սալմաստեցին, որ Գրիգոր Վարազդեցուն ձեռնադրում է և առաջնորդ նշանակում, տապալիկ կենդանի էր նույն թվականի ապրիլի 14-ին և գտնվում էր Լվովում՝ Այս հանդամանքները մեզ ստիպեցին առաջին հիշատակարարների բնագրի մեջ անկյունավոր փակագծերով մուծել երկու բառեր, որոնք անուշադրության կամ շտապողականության հետևանքով խուսափել են առանց այն էլ անփութի և անբերական շարադրող Մշեցի Օհանիսովի գրչից և որոնցով նախադասությունը դառնում է հստակ և հասկանալի Չմոռանալու ասել, որ ֆիրդաբեման էլ է արել նույնը:

Մենք այստեղ առաջ ենք բերում նաև Օհանիսովի երրորդ հիշատակարանը, որը ոչ նվազ հետաքրքրական է տվյալ խնդրի կրկին հաստատման համար.

«Տիրեցէր» գրիգոր վարդապետ՝ մականունամբ Անանիայենց կոչեցեալն՝ Ստեփաննոս Սալմաստեցի կաթողիկոսի աշակերտն՝ դաւառաւ Վարազեցի. որ ընդ վարդապետին իւր զնացեալ ի Հոռմ ի Պօղոս և Պետրոս. և անտի անցանկով զծով և զցամաք հանդերձ վարդապետաւ և եկեալ հասին Իլով. [և Գրիգոր վարդապետն] յաջորդեաց յաթոռ եպիսկոպոսութեան՝ եղ [զնա] կաթողիկոսն՝ եպիսկոպոս քաղաքին: Եւ ես մեզօք տառապեալ Մշեցի Յօհաննէսովս՝ օրինակեցի զսա հրամանաւ Վարազեցի Գրիգոր եպիսկոպոսին՝ քաջ և ընտիր վարդապետին. որ մականունն Անանիայենց [կոչի]. և էր եպիսկոպոս Լովայն՝ վիճակին... [Գրեցաւ] ի դուռն սուրբ Հաճարկատար Աստուածածնին»²⁴:

Բայց Ստեփանոս Սալմաստեցու այս շքրանի կաթողիկոսութեան մասին ձայնակցող գրիչները շատ են:

1553 թվականի հունվարին Աստվածատու Տարոնեցին Կեսարիայի Ս. Կարապետի վանքում վերանորոգում է մի ձեռագիր Ավետարան թի հայրապետութեան Տէր Ստեփանոս կաթողիկոսին»²⁵:

Նույն թվականից, ինչպես տեսանք արդեն, Սալմաստեցու կաթողիկոսությունը նշող մի հիշատակարան ծանոթ էր եղել նաև Չամչյանին, որ ասում է. «Ի յիշատակարանի միում գրեալ ի նոյն աւուրս ի Թուին Հայոց ՌԹ, այն էլ յամի Տեառն 1553, նա ինքն

Ստեփաննոս յիշի իբրեւ կաթողիկոս հայոց»²⁶:

1554 թվականին Աստվածատու Գնունին Ավերտու վանքում կազմում է մի Հայսմավուրք թի կաթողիկոսութեան Տէր Ստեփաննոսին»²⁷:

1555 թվականին Ներսես Արճիզեցին (Արճիզեցի?) Լվովում ընդօրինակում է մի մաշտոց թի կաթողիկոսութեան Էջմիածնին Տեառն Տէր Ստեփաննոսին»²⁸:

1556 թվականից թի Տէր Միքայել կաթողիկոս է և ի Տէր Ստեփանոս կաթողիկոս է՝ Սանահնի թեմին տրված երկու անտիպ կոնդակներ, որոնցից երկրորդն ունի նաև ամսաթիվ, ապրիլի 12²⁹:

Իսկ 1557 թվականին արդեն Առաքել Գալբիժեցու մոտ է հիշատակվում:

1560 թվականին Նդիա գրիչը Մարա երկրի Գեոամեջ վանքում ընդօրինակում է մի Հայսմավուրք թի հայրապետութեան Տեառն Սուրբ Էջմիածնին Տէր Ստեփաննոսին, Տէր Բարսեղին և զ... ասացէք»³⁰:

Նույն 1560 թվականին Ներսես երեցը (Արճիզեցի?) Լվովում ընդօրինակում է Աբուսայի թի «Մարգակազմութիւն»-ը թի կաթողիկոսութեան հայոց Տեառն Ստեփաննոսին»³¹:

1562 թվականին Միքայել քահանան Լվովում ավարտում է իր Բարդամանած հայատառ Բաթարեկն (զփշաղեկն)՝ նոր Կոստակարանի ընդօրինակությունը՝ «կաթողիկոսությունում Տէր Սղեփանոսնունկ»³²:

Եվ այսպես սույն թվականներից հետո եւ շարունակվում է Ստեփանոսի հիշատակությունը բազմաթիվ հիշատակարաններում:

Բայց այստեղ մի ուրիշ խնդիր է ծագում: Մի քանի հիշատակարաններում ժամանակի կաթողիկոս Ստեփանոսը կոչվում է Արքեշեցի (կամ Արքեշեցի): Ո՞վ պիտի լինի այս Ստեփանոս Արքեշեցին? Հիշատակարանները տեղեկություն չեն տալիս ոչ նրա ինքնությունը.

26. Հ. Մ. Չամչյան. «Գաղտնիքներ Հայոց», հատ. Գ, էջ 519:

27. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 6273, էջ 453, և № 6332, էջ 257:

28. Բուխարեստի Ռումինահայ կենտրոնական մատենադարանի ձեռ. № 4, էջ 160ր (հմտ. Սուրեն Ն. Քոլանջյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Բուխարեստի Հայ մշակութթի տան մատենադարանի», Երևան, 1948, անտիպ աշխատություն, որ գտնվում է Հայկական ՍՍՌ Պետ. մատենադարանում):

29. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 3931, էջ 95ա—96ա և 96բ—98ա:

30. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 6282, էջ 625բ—626ա:

31. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 512, էջ 58ա:

32. Հ. Մ. Չամչյան. «Մայր ցուցակ», հատ. Գ, էջ 538:

24. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 6273, էջ 455—456, և № 6332, էջ 266—267:

25. Հ. Ք. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատ. Ա, Վենետիկ. 1914, էջ 417—418:

մասին, ոչ էլ այն մասին, թե նա ո՞ր թվականին է նստել Կաթողիկոսական Աթոռի վրա: Այս անունը ծանոթ է և Առաքել Դավթիսեցուն, որի գավազանացանկում գրված է 1567 տարեթվի տակ, ըստ այն հիշատակարանի, որ հեղինակն ունեցել է իր ձեռքում: Առաքել Դավթիսեցու մոտ, ուրեմն, մենք ունենք Ստեփանոս անունով երկու հաջորդական կաթողիկոսներ, Սալմաստեցի և Առնշեցի, որոնց կաթողիկոսության սահմանները չեն որոշվում, որով կարելի է հարց դնել, թե սրանք միևնույն անձնավորությունը չե՞ն արդյոք: Դավթիսեցին չէր կարող գաղափար ունենալ այսպիսի խնդրի մասին և հետևաբար, տարբեր հիշատակարաններում երկու տարբեր անուններ գտնելով, իրավունք ուներ այդ երկու անունները որպես տարբեր կաթողիկոսների տեղավորել իր ժամանակագրական ցանկում, և թե նրանք միևնույն անձն էլ եղած լինեին: Իսկ մենք կարծում ենք, որ նրանք տարբեր անձեր չեն: Այս մասին ապացույց ենք գտնում Կամենեցյան տարեգրության մեջ ազդեցված հետևյալ հիշատակարանում.

«Թվ. ՌԺԱ. Հայոց ազգիս Տէր Ստեփանոս Առնշեցի կաթողիկոսն եկաւ ի Կամենիցս, ստոյգ և ճշմարիտ ճանապարհաւ. և եկաց ի Կամենիցս՝ ի Հրեշտակապետացն մինչև ի Տնօրէնութիւն Քրիստոսի. և ապա գնաց յիլով քաղաքն, և անդ ընդունելի և պատուելի եղաւ քրիստոնէից. և ապա դարձեալ եկն ի Կամենիցս: Եւ էին ընդ նմա Տէր Զաքարեայ եպիսկոպոս, և Տէր Դաւիթ վարդապետ, և Լուսիկ անուն սարկաւազ մի. զոր մեղ եկին, և զՍ. Լուսաւորչին օրհնութիւն ետուն: Բայց մեծ դարմանք զմեղ կալաւ, որ ի յայս աշխարհս զՍ. Էջմիածնայ զկաթողիկոս տնտաք. վասն զի յօրէ յօրմէ հետէ զՍ. Էջմիածնայ Աթոռն կարգել է Ս. Լուսաւորչին մեր Հայոց ազգիս՝ մինչև ցայժմ կաթողիկոս ի այս աշխարհս բնաւ որ չէր տեսնալ, զոր մերոյ տեսնալ, և Աստուծոյ փառս մատուցեալ, որ զմեղ այնպիսի ճշմարիտ քահանայապետին տեսոյն արժանացոյց»³³,

Այս հիշատակարանը, որ նույնությամբ մի ձեռագրից է վերցվել, կրում է 1562 տարեթիվը, բայց նրա բովանդակությունը չի հաշտվում այդ տարեթվի հետ:

Նախ պիտի ասել, որ 1562 թվականին որեւէ հայ կաթողիկոս, ավագ կամ աթոռակից, չէր կարող գտնված լինել Եվրոպայում, որովհետև այդ պարագային նա կզնար մինչև Հռոմ և նույն թվականի մայիսին Սերաստիայի ժողովի կողմից ուղարկված պատվի-

րակության մաս կկազմեր. մինչդեռ աղբյուրների լուրջությամբ, որ անկարելի կլիներ այդ դեպքում, ժխտում է այդ Սուլթանշահի մի նամակը, որ մանրամասնություններով է մեղ պատմում Սերաստիայի ժողովի և պատվիրակության մասին, չի ասում այդպիսի բան³⁴, Պատվիրակության մեկնումից (1562 թ. մայիսի 20) հետո էլ չէր կարող մեկնած լինել որեւէ աթոռակից կաթողիկոս, որովհետև այդ դեպքում այդ մասին Միքայել Սերաստացին անպայման կխոսեր իր այն նամակում, որ ինքը 1563 թվականի ապրիլին գրել էր պապին, երբ տեսել էր, թե Արքայրան պատվիրակությունից տեղեկություն չէր ստացվել մինչև այդ³⁵, Եվ վերջապես ինչո՞ւ համար պապի պահանջած հայկական դավանությունը պիտի խմբագրեր աշխարհական Արքայրը, մի երեցի օգնությամբ, եթե մի հայ աթոռակից կաթողիկոս գտնված լիներ Հռոմում և կամ Լեհաստանում, որը կաթողիկ երկիր էր³⁶, Բացի այդ, հիշատակարանի հեղինակը, որ իր տեսածն է պատմում և ոչ թե լսածը, զարմանք է հայտնում, որ այդ երկիրը հայոց կաթողիկոս է եկել, իսկ մենք գիտենք, որ 50-ական թվականների սկզբներին, և վերջին հիշատակությամբ՝ 1555 թվականին, Լեհաստանում եղել էր Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը. ուստի զարմանալին մեղ համար այն է, թե 1562 թվականին գրող կամենեցացի մի հայ ինչպես կարող էր անգիտանալ կամ մոռանալ ընդամենը մի քանի տարի առաջ տեղի ունեցած այդպիսի մի դեպք: Եվ սակայն նրա խոսքերը կարիք չունեն մեկնաբանման: Նա ասում է. «Այն օրվանից, որ մեր հայ ազգի Ս. Լուսավորիչը հաստատել է Ս. Էջմիածնի Աթոռը, մինչև այժմ այս երկրումս ոչ ոք չէր տեսնել երբեք կաթողիկոս», և փառք է տալիս, որ իրենք արժանացել են այդպիսի երջանկության³⁷:

34. Սուլթանշահի նամակը հրատարակված է երկու անգամ, ա) «Հանդէս ամսօրեայ», 1906, էջ 322—325. բ) Վ. Գ. Զարգարյան, «Հիշատակարան», Պոլիս, տպ. Նշան Պատկիյան, 1910, էջ 256—258:

35. Ա. վրդ. Պալևյան, «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութեան նոցա ընդ Հռոմէական Եկեղեցւոյ ի Փլորեստեան սինհոդոսի», Վիեննա, 1878, էջ 152—153:

36. Արքայրի դավանագիրը տե՛ս նույն տեղում, էջ 154—158:

37. Երկու է, թե 1485 թվականին Հովհաննես կաթողիկոսը գտնվել էր Կամենեցում, ինչպես ավանդում է Ստեփանոս Ռոշրան, մի կոնգրակի վրա հիմնվելով (տե՛ս «Կամենից», էջ 135), բայց մինչև հաջորդ դարի երկրորդ կեսը կարող էր իրոք մոռացված լինել այդ դեպքը:

(Շարունակելի)